

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Դանիել Վարուժանի այստեղ ներկայացվող վեց անտիպ նամակները, որ գրված են ֆրանսերեն լեզվով, պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Դանիել Վարուժանի ֆոնդ, № 289)։ Դրանք սևագիր են և դժվար ընթեռնելի (մաքրագիրները դեռևս չեն հայտնաբերված)։ Նամակները անթվակիր են, սակայն Վարուժանի արխիվում գտնվող նյութերի (ֆ. 289, № 67, սևագիր տետր), ինչպես և կենսագրական տվյալների համադրումը և ուսումնասիրությունը կասկած չեն թողնում, որ №№ 1, 2 նամակները գրված են 1906 թ. մայիսին, №№ 3, 4, 5, 6 նամակները՝ 1906 թ. հունիս-հուլիս ամիսներին և № 7 նամակը՝ 1907 թ. ապրիլ-մայիս ամիսներին։

Վարուժանի նամակների հետ միասին հարկ ենք համարում հրատարակել նաև Պոլ Ֆրեդերիկի՝ նրան ուղղած նամակը, գրված 1906 թ. հունիսի 10-ին, Գենտում։

Գ. Լ. ԿԱՐԱԳՅՈՉՅԱՆ

1.

<1906, մայիս, Գենտ>

Անսահմանորեն ցավում եմ¹, որ հարկադրված եմ հրաժարվել Ձեր Ինստիտուտում իտալերեն դասընթաց վարելուց, որ Դուք ինձ առաջարկում եք։ Հիմնական պատճառը իմ համալսարանական զբաղվածությունն է, ինչպես նաև այն նախադրուշացումները, որոնցով ինձ տեղյակ դարձրիք Ձեր պայմանների մասին։

Ցավում եմ, որ Գենտում ծանոթ չեմ այդ գործին հարմար որևէ հայի, բացառությամբ մի պարոնի², որին Դուք լավ ճանաչում եք։

Հաճեցեք ընդունել մեծագույն հարգանքներիս հավաստիքը՝

Դ. Վարուժանի

2.

<1906, մայիս, Գենտ>

ԸՆԿԵՐՆԵՐ

Դժբախտաբար, չեմ կարող ընդունել ընկերության¹ անդորրագրերը, որ մտադիր եք ինձ ուղարկել հունիսի 1-ից։ Այդ օրվանից մի քանի օր անց ես մեկնում եմ քաղաքից² շորս ամսով և իմ վերադարձն անորոշ է։

Լիրդ, ես ցանկանում եմ, որ ջնջեք իմ անունը ձեր ցուցակից, թողնելով ինձ քաղցր հուշ իմ ընդունելության մասին, որը ես համարում եմ իրագործված, թեպետ մեկ օրով, բայց օրինական և պատվով։

Հաճեցեք ընդունել, սիրելի ընկերներ, իմ եղբայրական ողջույնները՝

Դ. Վ.

3.

<1906, հունիս, Գենտ>

Պարոն Սավվադուր Ռոկ դե Պլինո!

Դուք արդեն հավաստիացրիք ինձ Ձեր պատրաստակամությունը. որպեսզի ինձ հաճույք պատճառեք՝ տրամադրելով քաղաքական և հասարակական գիտությունների դասընթացի առաջին կուրսի Ձեր տետրերը։ Ձեր համակրանքի անկեղծությանը չեմ կասկածում։ Հուսով եմ, որ դրանք կուղարկեք Ձեր քննություններն ավարտելուց անմիջապես հետո, որովհետև ցանկանում եմ Ձեզ մեծ հաջողություն։ Վստահ եղեք, որ դրանք ես կպահպանեմ խնամքով և մաքուր այնպես, ինչպես Ձեր բարյացակամության մասին հիշողությունները և հաճելի տպավորությունները կպահանջում սրտումս։

Երկու օրից Գենտից մեկնում եմ Վենետիկ, ահա իմ հասցեն. Դանիել Վարուժան, Collège arménien, Carmini, Venise, Italie.

Հուսով եմ, որ չեք մոռանա։ Ձեզնից անկախ անփութություն հանդես բերելու դեպքում իմ ապագան կխոտորվի— ո՞վ գիտե, ինչ կերպարանափոխությամբ։

Հաղորդեցեք բարևներս Ձեր պարոն եղբորը և ընդունեք, իմ ընկեր, լավագույն զգացմունքներիս արտահայտությունը՝

Դանիել Վարուժան

4.

<1906, հունիս, Գենտ>

Գենտից մեկնելու պատճառով՝ ուզում եմ հայտնել խոնարհագույն երախտագիտությունս հոգեբանությունից Ձեր կարդացած դասախոսությունների համար, որոնք ինձ շատ օգտակար եղան։

Ընդունեք, պարոն պրոֆեսոր, իմ անկեղծ և երախտագիտությամբ լի հարգանքը և զգացմունքները։

Պատիվ ունեմ, պարոն պրոֆեսոր, Ձեր խոնարհ ծառան լինելու։ Համոզված եղեք, պարոն պրոֆեսոր, որ մտավոր այն սերմը, որ Բեղգիան տարածում է Ձեր շուրթերով, մի օր իմ արյան հետ կհրամցվի իմ հայրենիքի բարօրությանը, որը թեպետև ստրուկ է՝ շրջապատված թշնամիներով, սակայն միշտ ազատ է և ծաղկում է իր ըմբոստ զավակների ջերմեռանդության շնորհիվ։

5.

1906, 10 հունիսի Գենտ

Սիրելի պարոն

Ես վատառողջ էի և հնարավորություն չունեի դասընթացը վարելու ուրբաթ և շաբաթ օրերը։ Ես նույնիսկ անկողին ընկա։ Ինչպես Ձեր սիրալիր նամակի համար Ձեզ ավելի շուտ շնորհակալություն կհայտնեի։

Երջանիկ եմ իմանալով, որ իմ դասերը Ձեզ հետաքրքրել են։

Պատմությունը ճնշված ժողովուրդների և արդար գործերի սփոփիչն է։ Երբեք մի մոռացեք, որ մարդկանց կյանքը վաղանցուկ է և որ դժվար է գե-

րեղման մտնել չկարողանալով ողջունել Հայրենիքիդ ազատագրումը և արդարության հաղթանակը: Ժողովուրդները, ընդհակառակը, երկար կյանք և ժամանակ ունեն մինչև հավիտենություն:

Ձեր խեղճ Հայաստանը, որը ես այնքան սիրում եմ, գերեզմանից կհան-
նի ինչպես Հունաստանը, Սերբիան, Չեռնոգորիան, Բուլղարիան, Ռումինիան...

Ձեր նման ժրաջան և ազդեցիկ երիտասարդները կարող են շատ բան
անել Արևմուտքի հասարակական կարծիքը տեղաշարժելու համար:

Մի հրաժարվեք այդ պարտականությունից: Եվ եթե երբեք կարողանամ
Ձեզ աջակցել, վստահ եղեք, որ չեմ իուսափի: Ձեր ծեր պրոֆեսորը ամբողջ
սրտով սեղմում է Ձեր ձեռքը:

Պոլ Ֆրեդերիկ

6.

<1906, հուլիս, Ազուլո գյուղ, Վենետիկ>

Թանկագին Անրի¹

Ստացա Ձեր երկու բացիկները, որոնց պատասխանում եմ մեծ հաճույ-
քով, որն անբաժան է միշտ Ձեր մասին իմ հիշողություններից: Ցանկանում
եմ հաջողությամբ հանձնեք Ձեր քննությունները: Մի քանի ամսից հետո մենք
կհանդիպենք միմյանց, այս անգամ համալսարանի նույն նստարանին: Ինչ
վերաբերում է ինձ, ապա իմ հայրենակիցների շրջապատում անկաշկանդ եմ
զգում: Ներկայումս աշխատում եմ պատմության վրա: Եթե ինձ որևէ բան
հուզում է, դա այն է, որ իմ երկու պորտուգալացի բարեկամները² մինչ այժմ
չեն ուղարկել քաղաքական և հասարակական գիտությունների իրենց տես-
րերը:

Ի դեպ, եթե դրանք շատանամ, ստիպված կլինեմ հաճախել այդ գիտու-
թյունների առաջին տարվա³ դասընթացները:

Գրե՛լ եք արդյոք որևէ գրական երկ: Ինչ վերաբերում է ինձ, ահա եր-
կու օր է սկսել եմ մեկ վիպերգում⁴ նկարագրել հայկական ջարդերը, որը
մասադիր եմ վերարտադրել ֆրանսերեն:

Այստեղ ես հայտնաբերել եմ «Նիբելունգները»: Այն ավելի քիչ է հայտ-
նի քան «Իլիականը» և «Օսիանը», բայց ավելի է համապատասխանում արդի
տրամադրություններին:

Ձերդ՝ սիրով Դանիել Վարուժան

7.

<1907, ապրիլ-մայիս, Գենտ>

Սիրելի mamam¹

Երբ մոտեցավ մեկնելուդ ժամը, իմ զգացողությունը ինձ արդեն հեռա-
յրել էր քեզնից: Լուսամուտից ես տեսա, թե ինչպես դու կառք նստեցիր: Սիրտս
ուժգնորեն բաբախում էր, կուլ էի տալիս արցունքներս: Քո մեկնումի պատ-
ճառած սարսուռը ավելի ուժգին էր, քան երբ առաջին անգամ տեսա քեզ: Բա-
վական է, որ ես մտածեմ քո մասին և անմիջապես զգում եմ դատարկությու-
ն տանը և սրտումս: Երկրորդ անգամ է, որ կորցնում եմ մի mamam², որի

հիշատակը ակնածանքով կպահեմ իմ ջերմեռանդ հոգում, այնպես, ինչպես պահում են սրբապատկերը աղոթագրքում: Հաճախ, անհանգստությունից և բանաստեղծական ցնորքից խռովահույզ, կարծես լսում եմ քո թույլ ձայնը և միալար հազը, որոնք ինձ հիշեցնում են քո տառապանքը և տանջում հոգիս: Երբեմն ինքս ինձ հարցնում եմ, արդյոք նա բուժվե՞լ է, արդյոք գթության քույրերը կկարողանա՞ն նրան բուժել:

Հարցնում եմ և քո անվան շողերով լցված, տենդորեն դուրս եմ գալիս և անցնում սիկ. Wohens³-ի մոտ, քո մասին լուրեր իմանալու և իմ նորությունները հաղորդելու, որ նա քեզ հայտնի:

Հարգանքով՝ Գեորգի Կարուժան

ՄԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I.

1. Նամակի վրա հասցեատիրոջ անունը չի նշված:
2. Խոսքը, ըստ երևույթին, համպեկյան Գրիգորի (համպեկոֆ) մասին է, որը նույնպես սովորել է Գենտի համալսարանում: Ուսումնառության տարիներին նա մտերիմ է եղել Վարուժանի հետ: Տիրապետել է իտալերենին:

2.

1. Ընկերության անունը չհաջողվեց պարզել:
2. Վարուժանը հունիսի 10-ին մեկնում է նախ Վենետիկ, ապա Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի տեսուչ Ստ. Սարյանի հրավերով աշակերտության ամառանոցը՝ Ացոու:

3.

1. Վարուժանի պորտուգալացի ընկերներից է, որի հետ նա ծանոթացել էր Գենտում:

4.

1. Նամակի վրա հասցեատիրոջ անունը չի նշված, սակայն բովանդակությունից երևում է, որ այն ուղղված է Պոլ Ֆրեդերիկին:
2. Խոսքը բելգիացի անվանի պատմաբան, էյեթի, ապա Գենտի համալսարանների պրոֆեսոր Պոլ Ֆրեդերիկի (1850—1921) մասին է, որը Գենտի համալսարանում դասավանդում էր Վարուժանին և մեծ համակրանք էր տածում իր սանի հանդեպ:

6.

1. Անրի Էդվարդ Պիրեն (Henri Edouard Pirenne) — բելգիացի պատմաբան, Գենտի համալսարանի պրոֆեսոր, «Histoire de Belgique» վեցհատորյա ուսումնասիրության հեղինակ Անրի Պիրենի (1862 — 1935) զավակ, Գենտի համալսարանի գրականության և փիլիսոփայության բաժնի ուսանող, որի հետ Վարուժանը սերտ կապեր է ունեցել: Հետագայում Գենտի համալսարանի փիլիսոփայության դասախոս (տե՛ս իր եղբոր՝ Ժակ Պիրենի նամակը. Daniel Varoujean, Poèmes. Traduits et présentés par Luc-André Marcel avec la collaboration de G. Poladian, Beyrouth Hamaskaïne, 1969, էջ 21—22):

2. Տե՛ս նամակ 3:

3. Վարուժանը առաջին տարում (1905 թ. նոյեմբերին), որպես ազատ ունկնդիր, հաճախում է Գենտի համալսարանի գրական-փիլիսոփայական ճյուղի դասընթացները: Սակայն մեկ տարի դասախոսությունները լսելուց հետո նա ընտրում է քաղաքական և հասարակական գիտությունների ճյուղը, որպեսզի օրինականացնի ուսանողի իր իրավունքները: Հավանորեն Վարուժանը կամեցել է էքստենս թննություններ հանձնելով ընդունվել երկրորդ կուրս (տե՛ս Գեորգի Կարուժան, «Նամականի», Երևան, 1965, էջ 36, 95): Դրա համար նա մեծ հույսեր

էր կապում իր պորտուգալացի ընկերոջ խոստացած քաղաքական և հասարակական գիտությունների դասախոսությունների կոնսպեկտների հետ:

4. Խոսքը «Ջարդը» պոեմի մասին է, որը նախ լույս տեսավ «Անահիտի» 1907 թ. № 10—11—12-ում, ապա՝ 1907 թ. սեպտեմբերին Փարիզում, առանձին գրքուկով:

7.

1. Մեռ շհաջողվեց պարզել, թե ում է հասցեագրված սույն նամակը:

2. Երբեք բառից հետո գրված է «որի հոգին իմ քնարի հնչյունն է» նախադասությունը և ապա այն ջնջվել է Վարուժանի կողմից:

3. Տիկ. Wohens-ի անձնավորությունը չկարողացանք պարզել:

ИЗ НЕОПУБЛИКОВАННЫХ ПИСЕМ ДАНИЭЛА ВАРУЖАНА

Г. Л. КАРАГЕЗЯН

(Резюме)

Публикуемые здесь в переводе на армянский язык шесть писем Д. Варужана, написанные на французском языке, хранятся в его фонде, в Музее литературы и искусств им. Е. Чаренца (ф. 289). Они представляют собой черновики (беловики пока не обнаружены) и написаны неразборчивым почерком. Письма не датированы, однако изучение и сопоставление находящихся в архиве поэта материалов (ф. 289, № 67, черновая тетрадь), а также биографических данных о Варужане не оставляет сомнения в том, что они написаны в 1906—1907 гг.

Мы сочли нужным опубликовать также обращенное к Варужану письмо Поля Фредерика, написанное 10 июня 1906 г. в Генте.